ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

5 փետրվարի 2026թ. թիվ 101

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի ԹԻՎ 276 ՀՐԱՄԱՆԻ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և 3-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2026 թվականի փետրվարի 3-ի թիվ /45.7/3151-2026 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 21-ի «ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 276 հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «31.2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն» բաժնից հանել՝

«6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ (95-31.2-Մ2-5)» տողը (պաշտոնը),

2) «30.1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն» բաժնում ավելացնել՝

«10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ (95-30.1-Մ2-7)» տողը (պաշտոնը):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 5-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. փետրվարի 5
ք.Վանաձոր